

ընդունակութեամբ կառք մը քանի մ'երկվայրկինի մէջ կը բեռնաւորեն կամ կը դատարկեն : 1894ի առեւտրական ցուցակը կը ներկայացնենք աստ ընթերցողաց :

|                           |                      |
|---------------------------|----------------------|
| Արմտիք . . . . .          | Ֆռ. 2, 485, 000, 000 |
| Վաճառականութիւն . . . . . | » 2, 585, 000, 000   |
| Ձեռագործք . . . . .       | » 2, 835, 000, 000   |

Միահամուտ 7, 905, 000, 000

Նիւթականէն վերջը՝ նայինք նաեւ մտաւորականը : Շիզակոյի նախնական վարժարանք յաճախեալ են 140, 000 աշակերտներէ, որք միջին հաշուով այս ընթացքը երեք տարուան մէջ կ'աւարտեն. բազմաթիւ են երեկոյեան դպրոցք ուր կը յաճախեն մասնաւորապէս լեզուստէր պատանիք. բարձրագոյն ուսմանց ամէն մասնաճիւղին համար ալ մասնական վարժարաններ կան, և նորահաստատ համալսարանն ալ շատ ծաղկեալ դիրքի մէջ է և մեծ յոյս կու տայ :

Այլ և այլ դաւանութեանց եկեղեցիք 350 են, որք միշտ խոնեալ են 'ի բարեպաշտից. իսկ սրճարանք, երաժշտութեան և խաղի որահք 6400 են : Նմանապէս մեծագործ են իրեն բարեգործական հաստատութիւնները. այնքան վաճառականական շարժում կայ՝ որ ամէն օր դար մը կ'երենայ. իւր գլխաւոր յատկութիւնք են զուարթութիւն և մեծութիւն :

Քանի մը խօսք ալ պիտի ըսենք ուրիշ առթիւ իւր զալ տարուան աշխարհահանդիսին համար. զոր Ամերիկայի գիւտին Դ զարադարձին առթիւ, Միացեալ Նահանգաց Համաժողովն վճռեց 'ի Շիզակօ համաշխարհական ցոյցով մը տօնել այս դարեղընն, յորում նոր աշխարհն պիտի ուսուցանէ հնոյն թէ ի'նչ կը հասկըցուի համաշխարհական ցոյց մ'ըսելն :

## Ո Ր Դ Ի Ք

(8bu jեջ 300)

**Թ**է բնութեան օրէնք է սէրն առ ծնողս, և թէ՛ աստուածադիր պատուիրան. կիկերոն զայն ամէն առաքինութեանց հիմն կը համարի. — (Fundamentum est omnium virtutum pietas in parentes). — բնականաբար հայրն և մայրն են մեր առաջին բարեկամները. այն մահկանացուներն են՝ որոց ամենէն աւելի կը պարտինք. սրբազան պարտք մ'ունինք յարգանաց, երախտադիտութեան, սիրոյ և ամէն տեսակ ազնիւ զգացմանց առ նոսա :

Երբ կու գանք յաշխարհ, պանդուխտք, տկարք և դողդոջունք՝ ծնողք գթալիւր սիրով զմեզ իրենց ծոցը կ'ընդունին. մեր էութեան հարկաւոր ամէն տեսակ խնամք մեզ կը շալլեն. կը դաստիարակեն, կ'ուսուցանեն և սիրով կ'առաջնորդեն զմեզ 'ի դժուարին ուղին առաքինութեանց, միշտ խնամով ուշադիրք յագեցընելու մեր մանկական անմեղ փափաղներն և պէտքերը: Իրենց օրինակաւ կ'ուսուցանեն մեզ հեզութիւն, համբերութիւն, բարեսրտութիւն և այլ ամէն տեսակ աղնիւ և շահաւէտ առաքինութիւններ: Ընտանեացմէ դուրս մեծագոյն երջանկութիւն չի կայ. և ստուգիւ այս աշխարհիս վրայ ներելի է միայն զայս երջանկութիւն կոչել. վայ անոնց որ ասկէ խոյս կու տան:

Առ ծնողս ունենալիք յարգանքն և սէրը՝ սրբազան է և օրէնք բնութեան. Մտածեն որդիք որ եթէ ամենամօծանք յանցանք է 'ի բնութեան փտացընել ալևոր գլուխ մը՝ ո՛րչափ աւելի կը ծանրանայ նոյնն՝ եթէ այս ծերունին իւր ծնողքն ըլլայ, առ որ հասակին յատուկ յարգանքէն զատ՝ պարտին նաև սէր և երախտագիտութիւն ըստ օրինաց բնութեան:

Պատեն պաշարեն ուրեմն իրենց ծնողքը՝ ամէն տեսակ աղնիւ զգացմամբք և յարգանք՝ իրենց կենաց արեւուն խոնարհած միջոց. որով կրնան կերպով մը փոխարինել իրենց կենաց առաջին քայլերուն մէջ վրանին ցուցուած գթոյն և խնամոց: Ստէպ յեղյեղեն որդիք իրենց մտաց մէջ ամենայն երկայնմտութեամբ և գթով այս տխուր և բեղուն մտածութիւնը. այս սիրելի արարածները՝ որ մեր կենաց սկիզբն են՝ թերևս քիչ ատենէն պիտի իջնեն ի հող: Քանի որ բազդ ունիւք դեռ զանոնք տեսնելու՝ պատուենք և յարգենք, տալով իրենց մխիթարութիւն և զօրավիզն ընդդէմ ծերութեան տկարութեանց՝ որ դժբաղդաբար բազմութիւ են: Արդէն իրենց հասակը տխրութեան ենթակայ է՝ մենք ալ մեր կողմանէ տրտմութեան առիթ չի տանք իրենց: Առ նոսա ունեցած մեր ընթացքն և վարմունքն այնպէս գորովալից և սիրալիւր ըլլայ՝ որ ուրախացնեն զնոսա և կենդանացընեն: Երիտասարդութիւնն՝ որոյ առջև կեանքն այնչափ հրապուրական երևութով կը ներկայանայ՝ դիւրաւ կը մոռնայ որ իրեն ալևոր ծնողքը մերձ են 'ի կատարած կենացն. իրեն աչքին առջև օրերն անսպառ կը թուին. չի գիտեր որ իրեն ծնողաց համար անոնք արդէն համրուած և կարճ են. և մինչդեռ կը դեղեի դեռ մատուցանելու առ նոսա իւր երախտագիտութեան պարտքը, գթալից խնամք մխիթարելով այն քաղցր կենաց երեկոն, արդէն գիշերը վրայ իր հասնի և մթութեան մէջ կը դուրէն այն քաղցր դէմքերը: Այն ժամանակ քու տարաժամ

սէրդ և փոյթդ միայն գերեզման մը պիտի գտնէ իւր առջև . ընդունայն և կրկնապատիկ դառն են այն ատեն արտասուք . և այս ամէն բանէ վերջը քեզ ուրիշ բան չի մնար՝ բայց եթէ այն անջինջ և անըուն խղճմտանացդ խայթը՝ որ միշտ կեանքդ պիտի դառնացընէ :

Որդւոյ մը ապերախտութիւնը՝ շատ դառն կերպով կը քաւուի . Աստուած միայն իրեն կը վերապահէ մօր մը ամէն արտասուաց վրէժը . բայց ի՞նչ բանի կը ծառայէ ցաւալից մօր մը համար՝ որդւոյն պատիժը :

« Որդւոյ մը առ մայրն ունեցած սէրը, — կը գրէ իրաւամբ Սիրտ ոսկեղէն գրոց հեղինակը, — մարդկային սիրոյ աւենէն աւելի սրբազանն է . և թշուառ է նա որ զայն կ'արհամարհէ և առ ոտն կը կոխէ : Մարդասպան մը որ կը յարգէ իւր մայրը՝ ըսել է թէ սրտին մէջ դեռ պարկեշտութեան և ազնւութեան նշոյլ մ'ունի . իսկ մեծ և զօրաւոր անձ մը որ կ'ատէ և կամ կը վշտացնէ իւր մայրը՝ սա ընդ հակառակն մարդկանց մէջ ամենէն աւելի անարգ և անպիտանն է » :

Սիրոյ և գթոյ նուիրական ներդաշնակութիւն մը պէտք է հաստատուի ծնողաց և որդւոց մէջ . այնպէս որ որդիք առանց տրանջանաց համբերեն իրենց ծննդոց հասակին արդիւնք տկարութեանց և պակասութեանց, յիշելով Փէլլիքոյի ըսածը . — « Եթէ յանցաւորի մը համար կարեւոր են վկայք , դատաւորք , երկար և մանրամասն քննութիւնք , ո՞ր զաւակն է որ պիտի յաւակնի դատել իւր մայրն և հայրը . ինքը որ դեռ երիտասարդութեան պատրանաց մէջ է և անփորձ » :

Ծնողաց համար օրհնութեանց և քաղցրութեանց աղբիւր մ'է իրենց որդւոց սէրը . իրենք որ նոցա արտասուքը սրբեր են , և առաջին քայլերը ուղղեր են , քաղցրացնելով նոցա կեանքը , դիւրատար ընելով նորա դառնութիւններն և յոյսերն ալ փայլուն ցուցնելով . վահան և պաշտպանութիւն ըլլալով նոցա իրենց խնամքը , իսկ արդ. ծերանալով՝ փոխադարձաբար նեցուկ պիտի ունենան իրենց մեծցուցած զաւակը :

Այսպիսի զգացմունքներ հաստատապէս կ'արմատանան որդւոց սրտից մէջ՝ երբ իրենց առաջին հասակէն սկսին ծնողք ներշնչել ի նոսա բարեպաշտութեան և սիրոյ ճամբրիտ սկզբունքներ . ուսուցանելով իրենց դիմել առ Աստուած և հաւատոց օժանդակութեան , յուսով լաւագոյն աշխարհի մը . և զայս ոչ միայն խօսքով՝ այլ և օրինակաւ պէտք է ցուցընեն : Խեղճ որբը՝ ամէն տեսակ զրկանաց և տառապանաց մէջ՝ իւր լքման ժամանակ աւ ղօթիւք կը վերացնէ իւր սիրտն առ Աստուած : Խեղճ կոյրը՝ որ

բնութենէ պարգեւեալ ամենէն աւելի ազնիւ գործարանէն զըրկեալ է՝ հաւատալով յԱստուած կը յուսայ որ իւր աչքերն ընդ միշտ փակ պիտի չի մնան առ լոյսն, և այն որ այնքան կուրից լոյս պարգեւած է՝ վերջապէս պիտի գայ օր մ'ալ որ իրեն աչաց առջև պիտի փայլեցնէ յաւիտենականութեան այն օրը՝ որ վախճան չունի։ Հիւանդը որ անմխիթար և առաջ ամենեկին յուսոյ առողջութեան կը հեծէ իւր ցաւոց անկողնին մէջ՝ հիւանդանոցի մը տխուր որմնց տակ, և որոյ կեանքն ուրիշ փոփոխութիւն չունի բայց եթէ իւր համբերատար ընկերակցաց սրտակէզ տեսարանը, և երբեմն երբեմն հոգեվարաց աղիողորմ հառաչանաց արձագանքն, ընդ թեզք հաւատոց կը մխիթարուի՝ յուսալով որ քոյր իւր կրածներն 'ի փառս և յարգիւնս պիտի փոխարկին։

Պատմութեան մէջ գովեստիւ յիշատակուած է Յունաստանի՝ մանաւանդ Սպարտայի երիտասարդաց ունեցած յարգանքն առ օրէնս և առ ծերս, ուր եթէ մին 'ի սոցանէ երևէր հասարակաց ակմբոց կամ ժողովատեղեաց մէջ՝ երիտասարդք միահաւմուռ յոտին կը կանգնէին իրենց տեղը նորեկին թողլով։

Փարիսի կ'ըսէր թէ ըստ ինքեան չար նա է որ չի յարգեր գծերութիւն և զթշուառութիւն. օր մը փողոցին վրայ իւր մէկ աշակերտին հանդիպելով, որոյ վրայ մեծ գոհութիւն մը չունէր, տեսաւ որ սա ծեր և տկար վեղարաւոր մը կը պաշտպանէր ընդդէմ այլոց զուարճաբանութեանց և նախատանաց. չի կրնալով ինքզինքը զսպել Փարիսի՝ գրկելով զպատանին ըսաւ. « Քիչ մը յառաջ գլխդ կորուսեալ կը համարէի. իսկ արդ վկայ ըլլալով քու զգացմանցդ՝ կը հաւատամ որ կրնաս առաքինի անձ մ'ըլլալ »։

Ապագան երիտասարդաց ժառանգութիւնն է. ուստի պէտք է իրենց դիրք մը պատրաստեն. ապագային դաշտը իւր չլացուցիչ և հրապուրիչ խոստմամբք՝ ամենուն համար բաց է. ո և իցէ անձի մը համար՝ մեծագոյն մխիթարութիւն և ուրախութիւնն է՝ պատուաւոր կերպով և անձին ջանիւք ընկերական պատուաւոր դիրք մ'ունենալն յօգուտ իրեն և այլոց. միայն տգէտներն և տխմարներն են որ կ'ուզեն իրենց նախնեաց առաքինութեանց և քաջութեանց վրայ պարծիլ, որք շատ անգամ սխալ յիշատակաց վրայ հաստատեալ են. մինչդեռ պէտք են իրենք ալ իրենց յաջորդաց անարատ ավանդել իրենց համբաւը, որ խթան մը պիտի ըլլայ ետքը եկողաց, և քոյրի մը համար ինչ օգուտ ունի իւր ծնողաց սրաչեայ ըլլալն, կամ թշուառի մը՝ իւր հաւուն ճարտարախօսութիւնը։

Մոնդէսքիեօ կ'ըսէր երիտասարդաց. — « Երիտասարդ էք,

յուսացէք» : — Պէտք է օգուտ քաղել հասակէն . սերմանելով յարմար ժամանակին , որպէս զի եղանակին կարելի ըլլայ պտուղը քաղել . չըլլայ թէ բազմաց հանդիպածը ձեր գլխուն գայ , որք առաջին հասակին մէջ երկրորդին փափագելով՝ երբ վրայ կը հասնի երկրորդն՝ առաջինն կ'սկսին փնտռել :

Երիտասարդք , ընտանեաց հարկաւոր են իմաստուն և խոհեմ որդիք . անցելոյն պարծանքը զմեզ թուլացնելէ զատ ուրիշ բանի չի ծառայեր . փոխանակ զօրացընելու կը տկարացնէ . ձեր հարք իրենց պարտքն ըստ պատշաճի կատարած են , դուք ալ նմանեցէք անոնց :

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԱԾԽԱՐՀԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱԹՈՂԻԿԷ

ԱՌԱՋՆՈՐԴՔ ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼՍՈՅ

**Մ**ոլտաւիայէն ի Դրանսիլվանիա գաղթող ազգայնոց հետ՝ թէ և բաւական եկեղեցականք ընկերացան , ինչպէս Տէր Մինաս Զիլիֆթարօղլու՝ Էջմիածնական դաւանութեամբ Եպիսկոպոս , Տէր Եղիա Մընտրու աւագերէց , Ճէպնէպան Տէր Խաչատուր , Խաչերես տէր Թակօր , Զօգօրիաշ Տէր Թէոդօրոս , Եսսիեան Տէր Մինաս , Սոլիման Տէր Խաչատուր և Նիգօշեան տէր Աստուածատուր , ի վերայ այսր ամենայնի Եղիսաբեթուպօլսոյ եկեղեցական և աշխարհական առաջնորդաց վրայ՝ միայն 1700—էն սկսեալ ստողդ տեղեկու թիւն կրնանք տալ . վասն զի վերոյիշեալ եկեղեցականք ԺԸ դարուն սկիզբները միայն որոշեցին իրենց բնակութեան տեղը :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՔ

Ա.) Տէր Վարդան Օրսենտի , 1700 օգոստոսի 10—ին Մոլտաւիոյ Եասսի Մայրաքաղաքէն Եղիսաբեթուպօլիս անցնելով , իբրու եկեղեցական առաջնորդ , հոլուեց իւր հօտը 8 տարի . բայց կարողութիւն չունենալով կատարել իւր